ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IHSS) ԾՐԱԳԻՐ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԲԱԺԻՆՆԵՐ

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՄՆԳՐՔԻ 273ա ԲԱԺԻՆ, ԵՆԹԱԲԱԺԻՆ (ա)

(ա) Ցանկացած անձնավորություն, ով հանգամանքների կամ պայմանների ներքո հավանական է, որ մեծ մարմնական վնաս կամ մահ կպատճառի,դիտմամբ պատճառում կամ թույլ է տալիս, որ որևէ երեխա տառապի, կամ պատճառում է անարդարացնելի ֆիզիկական ցավ կամ մտավոր տառապանք, կամ երեխայի խնամքի կամ խնամակալության պատասխանատվությունն իր վրա ունենալով՝ դիտմամբ պատճառում կամ թույլ է տալիս անձին կամ տվյալ երեխայի առողջությունը վնասվելու, կամ դիտմամբ պատճառում կամ թույլ է տալիս, որ այդ երեխան ընկնի այնպիսի իրավիճակի մեջ, որտեղ իր անձը կամ առողջությունը վտանգի մեջ է, կպատժվի ազատազրկմամբ՝ վարչաշրջանի բանտում ոչ ավել քան մեկ տարի կամ նահանգային բանտում՝ երկու, չորս կամ վեց տարով:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՄՆԳՐՔԻ 368 ԲԱԺԻՆ

(ա) Օրենսդրությունը գտնում և սահմանում է, որ հանցագործություններն ընդդեմ տարեցների և կախում ունեցող մեծահասակների՝ հատուկ նկատառման և պաշտպանության կարիք ունեն, նման չլինելով հատուկ պաշտպանությանը, որը տրվում է անչափահաս երեխաներին, որովհետև տարեցները և կախում ունեցող չափահասները կարող են շփոթվել տարբեր դեղամիջոցներից, մտավոր կամ ֆիզիկական խնդիրներ ունենալուց, կամ մրցունակ չլինեն, և հետևաբար ավելի քիչ կարողանան իրենք իրենց պաշտպանել, հասկանալ կամ հաղորդել քրեական գործողությունը կամ իրենց անունից վկայություն տան դատական վարույթում:

(բ) (1) Ցանկացած անձ, ով գիտի կամ բանականորեն պետք է իմանա, որ անձը տարեց կամ կախում ունեցող չափահաս է, և որ նա, հանգամանքների կամ պայմանների ներքո, հնարավոր է, որ մեծ մարմնական վնաս կամ մահ պատճառի, դիտմամբ պատճառում կամ թույլ է տալիս, որ ցանկացած տարեց կամ կախում ունեցող չափահաս տառապի, պատճառում է անարդարացնելի ֆիզիկական ցավ կամ մտավոր տառապանք, կամ տարեցի կամ կախում ունեցող անձի խնամքի կամ խնամակալության պատասխանատվությունն իր վրա ունենալով դիտմամբ պատճառում կամ թույլ է տալիս տարեցի կամ կախում ունեցող անձի առողջությունը վնասվելու, կամ դիտմամբ պատճառում կամ թույլ է տալիս, որ այդ տարեցը կամ կախում ունեցող չափահասն ընկնի այնպիսի իրավիճակի մեջ, որտեղ իր անձը կամ առողջությունը վտանգի մեջ է, կպատժվի ազատազրկմամբ՝ վարչաշրջանի բանտում, ոչ ավել քան մեկ տարի ժամկետով կամ տուգանքով՝ ոչ ավել, քան վեց հազար ԱՄՆ դոլար ($6,000) կամ երկուսն էլ՝ և՛ տուգանքը և՛ բանտարկությունը, կամ բանտարկությունը նահանգային բանտում՝ երկու, երեք կամ չորս տարով:
(2) Եթե առաջին պարբերությունում (1) նկարագրված հանցանքի ժամանակ տուժողը մեծ մարմնական վնաս է ստանում, ինչպես սահմանված է 12022.7 Բաժնում, մեղադրյալը լրացուցիչ բանտարկություն կստանա նահանգային բանտում, ինչպես ներկայացված է ստորև.
(Ա) Երեք տարի, եթե տուժողը 70 տարեկանից ցածր է:
(Բ) Հինգ տարի, եթե տուժողը 70 կամ ավելի է:
(3)Եթե առաջին պարբերությունում (1) նկարագրված հանցանքի ժամանակ մեղադրյալը մահվան պատճառ է հանդիսանում, նա կստանա հավելյալ բանտարկություն նահանգային բանտում, ինչպես ներկայացված է ստորև.
(Ա) Հինգ տարի, եթե տուժողը 70 տարեկանից ցածր է:
(Բ) Յոթ տարի, եթե տուժողը 70 կամ ավելի է:

(գ) (1) Ցանկացած անձ, ով գիտի կամ բանականորեն պետք է իմանա, որ անձը տարեց կամ կախում ունեցող չափահաս է, և որ նա, հանգամանքների կամ պայմանների ներքո, հնարավոր է, որ մեծ մարմնական վնաս կամ մահ պատճառի, դիտմամբ պատճառում կամ թույլ է տալիս, որ ցանկացած տարեց կամ կախում ունեցող չափահաս տառապի, պատճառում է անարդարացնելի ֆիզիկական ցավ կամ մտավոր տառապանք, կամ տարեցի կամ կախում ունեցող անձի խնամքի կամ խնամակալության պատասխանատվությունն իր վրա ունենալով դիտմամբ պատճառում կամ թույլ է տալիս տարեցի կամ կախում ունեցող անձի առողջությունը վնասվելու, կամ դիտմամբ պատճառում կամ թույլ է տալիս, որ այդ տարեցը կամ կախում ունեցող չափահասն ընկնի այնպիսի իրավիճակի մեջ, որտեղ իր անձը կամ առողջությունը վտանգի մեջ է,կմեղադրվի հանցանքի մեջ: Այս ենթաբաժնի երկրորդ կամ համապատասխան խախտումը տուգանվում է տույժով, որը չի անցնում երկու հազար ԱՄՆ դոլարը ($2,000) կամ բանտարկությամբ՝ ոչ ավել, քան մեկ տարի վարչաշրջանի դատարանում, կամ և՛ տուգանքը և՛ բանտարկությունը:

(դ) Ցանկացած անձ, ով խնամատար չէ, ով խախտում է օրենքի որևէ արգելող դրույթ՝ կողոպուտի, գույքի հափշտակման, կեղծիքի՝ կամ խարդախության միջոցով, կամ ով խախտում է Բաժին 530.5-ը՝ արգելելով ինքնության կողոպուտը՝ կապված տարեցի կամ կախում ունեցող անձի սեփականության կամ անձական ինքնության տեղեկատվության հետ և նա, ով գիտի կամ բանականորեն պետք է , որ իմանա, որ տուժողը տարեց կամ կախում ունեցող անձ է, կպատժվի բանտարկությամբ՝ վարչաշրջանի բանտում՝ ոչ ավել քան մեկ տարով, կամ նահանգային բանտում՝ երկու, երեք կամ չորս տարով, երբ դրամը, աշխատանքը, ապրանքները, ծառայությունները կամ անշարժ կամ անձնական գույքը, որը վերցվել կամ ձեռք է բերվել գերազանցում է չորս հարյուր ($400) ԱՄՆ դոլարը, ինչպես նաև տուգանքով՝ ոչ ավել, քան հազար ԱՄՆ դոլար ($1000), բանտարկությամբ՝ ոչ ավել, քան մեկ տարի, կամ և՛ բանտարկությամբ և՛ տուգանքով, երբ

ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IHSS) ԾՐԱԳԻՐ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԲԱԺԻՆՆԵՐ

դրամը, աշխատանքը, ապրանքները, ծառայությունները կամ անձնական կամ անշարժ գույք, որը վերցվել կամ ձեռք է բերվել և որի արժեքը չի գերազանցում չորս հարյուր դոլարը($400):

(ե) Ցանկացած տարեցի կամ կախում ունեցողի անձ, ով խախտում է օրենքի որևէ արգելող դրույթ՝ կողոպուտի, գույքի հափշտակման, կեղծիքի կամ խարդախության համար, կամ ով խախտում է Բաժին 530.5-ը՝ արգելելով ինքնության կողոպուտը՝ կապված տարեցի կամ կախում ունեցող անձի սեփականության կամ անձական ինքության տեղեկատվության հետ, կպատժվի բանտակությամբ՝ վարչաշրջանի բանտում՝ ոչ ավել, քան մեկ տարի, կամ նահանգային բանտում՝ երկու, երեք կամ չորս տարով, երբ դրամը, աշխատանքը, ապրանքները, ծառայությունները կամ անշարժ կամ անձնական գույքը, որը վերցվել կամ ձեռք է բերվել, ավելի է, քան չորս հարյուր ԱՄՆ դոլարը ($400), և տույժով՝ ոչ ավել, քան հազար ԱՄՆ դոլարը ($1000), բանտարկությամբ վարչաշրջանի դատարանում՝ ոչ ավել , քան մեկ տարի, կամ և՛ տուգանքով և՛ բանտարկությամբ, երբ դրամը, աշխատանքը, ապրանքները, ծառայությունները կամ անշարժ կամ անձնական գույքը, որը վերցվել կամ ձեռք է բերվել չի գերազանցում չորս հարյուր ԱՄՆ դոլարը ($400):

(զ) Ցանկացած անձ, ով կեղծիքի միջոցով ազատազրկման է պարտավորեցնում տարեցի կամ կախում ունեցող չափահասի՝ բռնության, սպառնալիքի, խաբեության, կամ խորամանկության միջոցով, պատժվում է ազատազրկմամբ, նահանգային բանտում՝ երկու, երեք, կամ չորս տարով:

(է) Ինչպես օգտագործված է այս բաժնում, «տարեց» նշանակում է անձ, ով 65 տարեկան կամ ավելի է:

(ը) ԻՆչպես որ օգտագործվեց այս բաժնում, «կախում ունեցող չափահաս» նշանակում է անձ, ով 18-64 տարեկան է, ով ունի ֆիզիկական կամ մտավոր սահմանափակումներ, որն արգելում է նրան սովորական գործողություններ կատարել կամ իր իրավունքները պաշտպանել, ներառյալ, բայց չսահմանափակելով, մարդիկ, ովքեր ունեն ֆիզիկական կամ զարգացման հաշմանդամություն, կամ ում ֆիզիկական կամ մտավոր կարողությունները տարիքի պատճառով թուլացել են:«Կախում ունեցող չափահասը» ներառում է 18-64 տարեկան ցանկացած անձ, ով ընդունվում է որպես ստացիոնար հիվանդ՝ 24-ժամյա առողջապահական պայմաններով, ինչպես սահմանված է 1250,1250.2 բաժիններով և Առողջության և Ապահովության Օրենսգրքի 1250.3 բաժնով:

(թ) Ինչպես օգտագործվեց այս բաժնում, «խնամատար» նշանակում է այն անձը, ով տարեցի կամ կախում ունեցողի խնամքը, խնամակալությունը կամ վերահսկողությունն է ապահովում, կամ ում խնամառության տակ է տարեցը կամ կախում ունեցող անձը:

(ժ) Ոչինչ այս բաժնում չպետք է խոչընդոտի քրեական հետապնդմանը՝ և՛ այս բաժնի և՛ 187 կամ 12022.7 բաժինների կամ օրենքի այլ դրույթներով: Սակայն, անձը չի ստանա լրացուցիչ ժամկետով ազատազրկում՝ ենթաբաժնի (բ) տակ գտնվող երկու կետերի՝ և՛ (2)-ի և (3)-ի համաձայն՝ հանցանքի համար, ոչ էլ ազատազրկման լրացուցիչ ժամկետ կստանա՝ երկու Բաժինների՝ 12022.7 և ենթաբաժնի (բ)-ի (2) կամ (3) կետերի համաձայն՝ որևէ մեկ իրավախախտման համար:

(k) (ի)Ցանկացած դեպքում, երբ անձը դատապարտվում է սույն դրույթները խախտելու համար, դատարանը կարող է նրանից պահանջել համապատասխան խորդհիրդատվություն ստանալ, որպես ապացուցման պայման:Ցանկացած մեղադրյալ, ում կարգադրվել է լինել խորհիրդատվական ծրագրում, պատասխանատու կլինի անձամբ վճարել խորհիրդատվական ծրագրում իր մասնակցության ծախսը, ինչպես որ կսահմանի դատարանը:Դատարանը հաշվի կառնի մեղադրյալի վճարունակությունը, և որևէ մեկ մեղադրյալ վճարունակ չլինելու պատճառով չի մերժվի փորձաշրջան ունենալ:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, ԲԱԺԻՆ 290, ԵՆԹԱԲԱԺԻՆ (գ)

(գ) Հետևյալ անձանց կպահանջվի գրանցվել.

Ցանկացած անձ, ով 1944թ. Հուլիսի 1-ից սկսած դատապարտված է եղել կամ այսուհետ կդատապարտվի այս նահանգում կամ որևէ այլ դաշնային կամ ռազմական դատարանում՝ խախտելով 187 Բաժինը, ով հանցանք է գործել կամ փորձել է հանցանք գործել, բռնաբարել կամ որևէ այլ գործողություն է կատարել, կպատժվի Բաժին 286,288,288ա, կամ 289-ով, Բաժին 207 կամ 209-ով՝ հանցանք է գործել՝ մտադրված խախտելու Բաժին 261, 286, 288, 288ա կամ 289-ը, Բաժին 220-ը, բացի հարձակումից՝ քաոս ստեղծելու համար, Բաժին 243.4, պարբերություն(1), (2), (3), (4), կամ Բաժին 261-ի ենթաբաժին (ա)-ի պարբերություն (6)-ը, Բաժին 262-ի ենթաբաժին (ա), պարբերություն (1), որը ներառում է ուժի կամ բռնության կիրառում, որի համարը անձը դատապարտվում է նահանգային բանտում, Բաժին 264.1, 266 կամ 266գ, Բաժին 266ը՝ ենթաբաժին (բ), Բաժին 266թ՝ ենթաբաժին (բ), Բաժին 266ժ, 267, 269, 285, 286, 288, 288ա, 288.3, 288.4, 288.5, 288.7, 289 կամ 311,1, Բաժին 311.2-ի ենթաբաժին (բ), (գ) կամ (դ), Բաժին 311.3, 311.4, 311.10, 311.11 կամ 647.6, նախկին 647 ա Բաժին, 653զ բաժնի (գ) ենթաբաժին, 314 Բաժնի 1 կամ 2 ենթաբաժինը, ցանկացած հանցանք, որը ներառում է վավաշոտ կամ հեշտասեր պահվածք՝ համաձայն 272 Բաժնի, կամ ցանկացած հանցագործությաուն, որը խախտում է Բաժին 288.2-ը, ցանկացած օրինական նախորդ ,որը ներառում է վերը նշված հանցանքներից մեկի բոլոր՝ տարրերը, կամ որևէ այլ անձ, ով այդ օրվանից սկսած դատապարտված է եղել կամ հետագայում կդատապարտվի՝ փորձելու կամ գաղտնի դավադրությամբ կատարելու վերը նշված հանցագործություններից մեկը:

ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IHSS) ԾՐԱԳԻՐ
ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, ԲԱԺԻՆ 667.5, ԵՆԹԱԲԱԺԻՆ (գ)

(գ) Այս բաժնի նպատակների համար, «վայրագ հանցագործություն» կնշանակի.

(1) Սպանություն կամ դիտավորյալ սպանություն:

(2) Քաոս.

(3) Բռնաբարություն, ինչպես սահմանված է Բաժին 261-ի ենթաբաժին (ա) (2) կամ (6) պարբերություններում կամ Բաժին 262-ի (ա) ենթաբաժնի (1) կամ (4) պարբերություններում:

(4) Համասեռամոլություն, ինչպես սահմանված է Բաժին 286-ի (գ) կամ (դ) ենթաբաժիններում:

(5) Բերանով սեռական հարաբերությունը, ինչպես սահմանված է Բաժին 288ա-ի (գ) կամ (դ) ենթաբաժիններով:

(6) Վավաշոտ կամ հեշտասեր գործողություն, ինչպես սահմանված է Բաժին 288-ի (ա) կամ (բ) ենթաբաժիններով:

(7) Ցանկացած հանցագործություն, որը դատապարելի է մահվամբ կամ ցմահ ազատազրկմամբ նահանգային բանտում:

(8) Ցանկացած հանցագործություն, որտեղ մեղադրյալը մեծ մարմնական վնաս է պատճառում կամ մեղսակցից զատ ցանկացած անձ, որը տուգանվել և ապացուցվել է, ինչպես նշված է Բաժին 12022.7, 12022.8 կամ 12022.9-ով կամ 1977թ. Հուլիսի 1-ից հետո, կամ ինչպես նշվում է 1977թ. Հուլիս 1-ից առաջ, Բաժիններ 213, 264 և 461-ում, կամ ցանկացած հանցագործություն, որտեղ մեղադրյալը ատրճանակ է օգտագործում, որի օգտագործումը տուգանվել և ապացուցվել է՝ համաձայն Բաժին 12022.3-ի (ա) ենթաբաժնի կամ Բաժիններ 12022.5 կամ 12022.55-ի:

(9) Ցանկացած գողություն:

(10) Դիտավորյալ հրկիզում՝ խախտելով Բաժին 451-ի (ա) կամ (բ) ենթաբաժինները:

(11) Սեռական ազդեցությունը, ինչպես սահմանված է Բաժին 289-ի (ա) կամ (ժ) ենթաբաժիններով:

(12) Սպանության փորձ:

(13) Բաժին 12308-ի, 12309-ի կամ 12310-ի խախտում:

(14) Մարդկանց առևանգում՝

(15) Մտադրված հարձակում՝ որոշակի հանցագործություն կատարելու նպատակով, որը խախտում է Բաժին 220-ը:

(16) Երեխայի հանդեպ շարունակական սեռական բռնություն, որը խախտում է Բաժին 288.5-ը:

(17) Մեքենայի առևանգում, ինչպես սահմանված է Բաժին 215-ի (ա)ենթաբաժնում:

(18) Բռնաբարություն, ամուսնական բռնաբարություն կամ սեռական ազդեցություն, որը խախտում է Բաժին 264.1-ը:

(19) Շորթում, ինչպես սահմանված է բաժին 518-ում, որն իրենից հանցագործություն է ներկայացնում և որը խախտում է Քրեական օրենսգրքի Բաժին 186.22-ը:

(20) Սպառնալիքներ տուժողների կամ վկաների հանդեպ, ինչպես սահմանված է Բաժին 136.1-ով, որն իրենից ներկայացնում է հանցագործություն, որը խախտում է Քրեական Օրենսգրքի Բաժին 186.22-ը:

(21) Առաջին աստիճանի ցանկացած կողոպուտ, ինչպես սահմանված է բաժնի 460-ի (ա) ստորաբաժանման մեջ, որտեղ այն տուգնավում և ապացուցվում է, որ մեկ այլ անձ, մեղսակցից զատ, ներկա է եղել կողոպուտին:

(22) Բաժին 12022.53-ի ցանկացած խախտում:

(23) Բաժին 11418-ի (բ) կամ (գ) ենթաբաժինների խախտում: Օրենսդրությունը գտնում և հայտարարում է, որ այդ նշված հանցագործությունները արժանի են հատուկ ուշադրության, երբ դատապարտում է իրականացվում՝ հասարակությանն ստիպելու դատապարտել այս արտասովոր բռնությամբ ուղեկցվող հանցագործությունները, որոնք ուղղված են մարդկանց դեմ:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, ԲԱԺԻՆ 1192.7, ԵՆԹԱԲԱԺԻՆ (գ)

(գ) Ինչպես օգտագործված է սույն բաժնում, «լուրջ հանցագործություն» նշանակում է հետևյալներից մեկը.

(1) Սպանություն կամ դիտավորյալ սպանություն, (2) քաոս, (3) բռնաբարություն, (4) համասեռամոլություն բռնի ուժով, բռնությամբ, ստիպողաբար, սպառնալիքով, վախեցնելով կամ մեծ մարմնական վնասվածքով , վախով կամ հանկարծակի և անօրինական մարմնական վնասվածքով տուժողի կամ մեկ այլ անձի հանդեպ, (5) բերանով սեռական հարաբերության՝ բռնի ուժով, բռնությամբ, ստիպողաբար, սպառնալիքով, վախեցնելով կամ մեծ մարմնական վնաս պատճառելով , վախով կամ հանկարծակի և անօրինական մարմնական վնասվածքով տուժողի կամ մեկ այլ անձի հանդեպ, (6) վավաշոտ կամ հեշտասեր գործողություն 14 տարեկանից ցածր երեխայի հանդեպ, (7) ցանկացած հանցագործություն, որը մահվան կամ ցմահ դատապարտման է ենթարկվում նահանգային բանտում, (8) հանցագործություն, որտեղ մեղադրյալը անձամբ մեծ մարմնական վնաս է պատճառում ցանկացած այլ անձի, մեղադրյալից զատ կամ ցանկացած այլ հանցագործություն, որտեղ մեղադրյալը ատրճանակ է օգտագործում, (9) մտածված սպանություն, (10) հարձակում՝ բռնաբարություն կամ գողություն կատարելու նպատակով, (11) մահացու զենքով կամ գործիքով հարձակում խաղաղությունն ապահովող պաշտոնյայի վրա, (12) ցմահ դատապարտյալի հարձակումը կալանավոր չեղողի վրա, (13) հարձակում մահացու զենքով՝ կալանավոր չեղողի կողմից, (14) հրկիզում, (15) կործանարար սարքի կամ ցանկացած պայթուցիկ սարքի պայթեցում՝

ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IHSS)ԾՐԱԳԻՐ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ՎՆԱՍԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹՅԱՄԲ, (16) կործանարար ցարքի կամ ցանկացած պայթուցիկ սարքի պայթեցում՝մարմնական վնաս, մեծ մարմնական վնաս կամ քաոս պատճառելով, (17) կործանարար սարքի կամ ցանկացած պայթուցիկ սարքի պայթեցում՝սպանելու մտադրությամբ, (18) 1-ին աստիճանի ցանկացած գողություն, (19) կողոպուտ կամ բանկի կողոպուտ, (20) առևանգում, (21)նահանգային բանտում ազատազրկված անձի կողմից պատանդ պահել, (22) հանցագործության փորձ կատարել, որը մահվամբ կամ ցմահ բանտարկությամբ է դատապարտվում՝ նահանգային բանտում, (23) ցանկացած հանցագործություն, որտեղ մեղադրյալն անձամբ օգտագործել է վտանգավոր կամ մահացու զենք, (24) վաճառելը, դասավորելը, կազմակերպելը, տալը կամ առաջարկելը կամ տալ, դասավորել, կազմակերպել կամ տալ անչափահասին՝ ցանկացած հերոին, կոկաին, ֆենսիքլիդին (PCP) կամ այլ թմրամիջոց, ինչպես նկարագրված է Առողջապահության և Անվտանգության Օրենսգրքի Բաժին 11055-ի (դ) ենթաբաժնի (2) պարբերությունում, կամ մետամֆետամինի որևէ բաղադրիչներից, ինչպես նկարագրված է Առողջապահության և անվտանգության Օրենսգրքի Բաժին 11055-ի «զ» ենթաբաժնի (1) պարբերության (Ա) ենթապարբերությունում, (25) 289 բաժնի (ա) ենթաբաժնի ցանկացած խախտում, որտեղ գործողությունը կատարվում է տուժողի կամքին հակառակ՝ ուժով, բռնությամբ, հարկադրաբար կամ վախի ներքո՝ հանկարծակի և անօրինական մարմնական վնաս պատճառելով տուժողին կամ մեկ այլ անձնավորության, (26) մեծ գողություն ատրճանակի գործադրությամբ, (27) մեքենայի առևանգում, (28) ցանկացած հանցագործություն, որը կարող է իր մեջ ներառել բաժին 186.22-ի խախտում, (29)մտադրված հարձակում՝ քաոս, բռնաբարություն, համասեռամոլություն կամ բերանով սեռական հարաբերության մեջ մտնելու համար՝ 220 Բաժինը խախտելով, (30) թթու կամ հրկիզվող նյութեր նետելով խախտել Բաժին 224-ը, (31) հարձակում մահացու զենքով, հրազենով ,գնդացիրով զինված հարձակում, կամ կիսաավտոմատ հրազենով կամ հարձակում խաղաղությունն ապահովող պաշտոնյայի կամ հրշեջի վրա, խախտելով Բաժին 245-ը, (32) գրոհ՝ մահացու զենքով՝ ընդդեմ հանրայինաշխատակցի, պատասխանատու պաշտոնյայի կամ դպրոցի աշխատակցի՝ խախտելով 245,2, 245,3 կամ 245,5 Բաժինները, (33) հրազենի գործադրում բնակեցված տան, մեքենայի կամ օդանավի վրա՝ խախտելով բաժնի 246, (34) բռնաբարություն կամ սեքսուալ ազդեցություն մեկ այլ անձի հետ՝ խախտելով 264,1 Բաժինը, (35) շարունակական սեռական չարաշահում երեխայի հանդեպ՝ խախտելով 288.5 Բաժինը, (36) ավտոմեքենայից կրակելը՝ խախտելով բաժնի 12034-ի ենթաբաժնի (գ) կամ (դ)-ն, (37) տուժողների կամ վկաների ահաբեկում՝ խախտելով Բաժին 136.1-ը, (38) քրեական սպառնալիքներ՝ խախտելով Բաժին 422, (39) հանցագործություն կատարելու ցանկացած փորձ, որը թվարկված է նշված ենթաբաժնի մեջ, և որը տարբերվում է բռնի հարձակումից, (40) Բաժին 12022.53-ի ցանկացած խախտում, (41) Բաժին 11418-ի (բ) կամ (գ) ենթաբաժինների խախտում, և (42) հանցագործություն կատարելու ցանկացած դավադրություն, որը նկարագրված է այս ենթաբաժնում:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՍԳԻՐՔ, ԲԱԺԻՆ 10980, ԵՆԹԱԲԱԺԻՆՆԵՐ (գ) ԵՎ (է) ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ (2)

(գ) Երբ ցանկացած մարդ կամովին և գիրակցելով մտադրվում է խաբել՝ կեղծ հայտարարություններով և ներկայացնելով, կամ ձախողելով բացահայտել նյութը, կամ նմանակումով կամ այլ խարդախ միջոցներով ձեռք բերված կամ պահված օգնությունը՝ համաձայն այս բաժնի դրույթների, իր համար կամ երեխայի, ով ըստ էության չունի դրա իրավունքը, ապա անձը ձեռք բերելով այդ օգնությունը պետք է պատժվի հետևյալ կերպ.

(2) Եթե ձեռք բերված կամ պահված օգնության ընդհանուր չափը ավելի է քան ինը հարյուր հիսուն ԱՄՆ դոլարը ($950), ապա պատիժը կլինի՝ բանտարկություն նահանգային բանտում 16 ամսվա ժամկետով, երկու տարով կամ երեք տարով, տույժով՝ ոչ ավել, քան հինգ հազար ԱՄՆ դոլարը ($5,000), կամ և՛ բանտարկությամբ և՛ տույժով, կամ բանտարկությամբ՝ վարչաշրջանի բանտում՝ ոչ ավել, քան մեկ տարի ժամկետով, տույժով՝ ոչ ավել, քան հազար ԱՄՆ դոլարը ($1,000) կամ և՛ բանտարկությամբ և՛ տույժով:

(է) Ցանկացած մարդ, ով գիտակցելով օգտագործում, փոխադրում, վաճառում, գնում կամ ձեռք է բերում սննդային դրոշմանիշներ, էլեկտրոնային ճանապարհով փոխանցված նպաստներ կամ լիզորություն՝ մասնակցելու Լրացուցիչ Սննդառության Օգնության դաշնային Ծրագրին, որևէ ձևով, չլիազորված՝ համաձայն Մաս 6-ի Գլուխ 10-ի(սկսվում է Բաժին18900-ով) կամ 1977թ. Սննդի Դրոշմանիշների դաշնային Ակտով (Հանրային Օրենք 95-113 և բոլոր բարեփոխումները) կամ 2008թ. Սննդի և Սննդառության Ակտով (7 U.S.C. Sec. 2011 et seq.)

(2) մեղավոր է հանցանքի համար, եթե սննդային դրոշմանիշների արժեքը կամ մասնակցության լիզորությունների արժեքը գերազանցում է ինը հարյուր հիսուն ԱՄՆ դոլարը ($950) և կպատժվի բանտարկությամբ՝ նահանգային բանտում՝ 16 ամիս ժամկետով, երկու տարով կամ երեք տարով, տույժով՝ ոչ ավել, քան հինգ հազար ԱՄՆ դոլարը ($5,000), կամ և՛ բանտարկությամբ և՛ տուգանքով, կամ բանտարկությամբ՝ վարչաշրջանի բանտում՝ ոչ ավել, քան մեկ տարով կամ տուգանքով՝ ոչ ավել , քան հազար ԱՄՆ դոլարը ($1,000), կամ և՛ բանտարկությամբ և՛ տուգանքով: